

ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՋ ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ

Ըստ Սերի Սնելլ-Հորնբիի մարդկային լեզուն որպես երևույթ ուսումնասիրող տեսությունն, անշուշտ, պետք է իր մեջ ներառի նաև թարգմանության ոլորտը (Snell-Hornby, M. 1988/1995): Եվ, ինչպես նշել է Ռ. Բոգրանը 1970-ական թթ. վերջերին, այդ տարիներին թարգմանության տեսաբաններն առաջ էին քաշում այն գաղափարը, որ փոխակերպական քերականությունը, ինչ-որ չափով նաև կառուցվածքային լեզվաբանությունը ընդհանուր առմամբ որոշիչ դեր են խաղացել ընդհանուր թարգմանաբանության գործում (Beaugrande, Robert de, 1978, 8-11):

Իսկ ըստ ռուս լեզվաբան Վ. Ս. Վինոգրադովի փոխակերպական քերականությունը հիմք է հանդիսացել թարգմանաբանության կարևոր կաղապարներից մեկի՝ փոխակերպական կաղապարի զարգացման համար: Նա գտնում էր, որ այս կաղապարի տեսական հիմնավորման ընթացքում թարգմանությունը ընկալվում է որպես բնագրի փոխակերպում թարգմանող լեզվի: Թարգմանիչը ընկալում է բնագիրը, գիտակցության մեջ կատարում է մի շարք միջլեզվական փոխակերպումներ, այնուհետև կատարում թարգմանություն:

Առաջնային են համարվում, այսպես կոչված, «միջուկային շարահյուսական կառույցների» կերտման գործընթացները, որոնք ըստ այս կաղապարի կողմնակիցների (Ն. Խոմսկի և նրա դպրոցին հետևողներ) գոյություն ունեն տարբեր լեզուներում և բնորոշվում են բանական-շարահյուսական կապերի և բառային կազմի ընդհանրությամբ: Այլ կերպ ասած բնագիրն ընկալվում է որպես միջուկային կառույցների ամբողջություն, որոնց համար համարժեքներ պիտի լինեն թարգմանող լեզվում, կամ այդ համարժեքները պիտի վեր հանվեն փոխակերպության կանոնների համաձայն: Թարգմանչի գիտակցության մեջ բնագիրը վերլուծության փուլում նվազեցվում է մինչև միջուկային կառույցների խմբի, այնուհետև հաջորդ փուլում այդ խումբը փոխարինվում է թարգմանող լեզվին համարժեք կառույցներով, իսկ ամենավերջում (երրորդ փուլում) վերածվում են իրական տեքստի, որը համապատասխանում է բնագրին (В. С. Виноградов, 1978):

Փոխակերպական կաղապարի և փոխակերպական քերականության միջև եղած կապն ուսումնասիրվել է լեզվաբան Վ. Յու. Ռոզենցվեյգի «Թարգմանություն և փոխակերպում» հոդվածում: Ռոզենցվեյգը նշում է, որ թարգմանությունը կարող է բնորոշվել որպես գործընթաց, տեղի է ունենում անցում մի հաղորդումից, այսինքն՝ տվյալ լեզվի նշանային համակարգից մեկ այլ լեզվի համակարգ ըստ երկու լեզվական համակարգերի միջև նախապես հաստատված համապատասխանության: «Նախապես հաստատված համապատասխանություն» ասելով Ռոզենցվեյգը հասկանում է իրականության և նշանների միջև հարաբերությունները: Այս տեսանկյունից թարգմանությունը դիտվում է

որպես մի լեզվի նշանային համակարգից անցում մյուսին, որն անտեսում է թարգմանող և բնագրի լեզուների նշանների իմաստային գործառույթը: Այնուամենայնիվ, թարգմանության «շարահյուսական» նկարագիրն իմաստալից է այնքանով, որքանով որ ձգտում է կաղապարել թարգմանությունը որպես կերտման գործընթաց և նկարագրել վերջինիս իրագործման հիմնական տիպերը:

Արդեն հայտնի փաստ է, որ գոյություն ունի թարգմանության իրականացման երկու ձև.

1. թարգմանության երկու միավորների միջև գոյություն ունի ուղղակի համապատասխանություն,
2. ուղղակի համապատասխանության բացակայության պատճառով փոխակերպման անհրաժեշտություն:

Սեկ ընդհանուր բովանդակային պլանով և արտահայտման երկու տարբեր ձևերով համակարգը կարող է ընդգրկել երկու տվյալ (լեզուների միայն մի որոշ հատված՝ գոյացնելով մի հատում, որի շրջանակներում բառապաշարի տարրերը և շարահյուսական կառույցներն անմիջականորեն թարգմանում են իրար (В. Ю. Розенцвейг, 1964, էջ 88):

Հարց է առաջանում, թե այս փոխակերպումը ինչպիսին պետք է համարել շարահյուսակա՞ն, թե՞ բառային:

Ըստ Ռոզենցվեյգի, օրինակ, պարտադիր չէ, որ թարգմանական այդ փոխակերպումները լինեն միանշանակ: Յուրաքանչյուր թարգմանիչ կարող է ընտրել իր համար ընդունելի տարբերակը: Եվ քանի որ գեղարվեստական գրականության թարգմանությունը ենթադրում է որոշակի ստեղծագործական գործընթաց, միևնույն նախադասությունը կարող է ներկայացվել թարգմանող լեզվում տարբեր ձևերով: Այստեղ, եթե բնագիրն ընդունենք որպես միջուկային կամ ելակետային կառույց իսկ թարգմանության տարբերակներն իբրև այդ կառույցի հնարավոր փոխակերպումներ, ապա կարելի է ընդգծել կապը լեզվաբանության մեջ հայտնի «փոխակերպական կաղապարի», «փոխակերպական քերականության» և տվյալ դեպքում արդեն թարգմանաբանության մեջ ձևավորվող «փոխակերպական կաղապարի» միջև:

Հայտնի է, որ ըստ Լ. Խոմսկու գոյություն ունի մեկ ելակետային կամ միջուկային կառույց, որից կարող են սերվել մյուս փոխակերպները (տրանսֆորմները): Օրինակ «Լախարարը ժամանել է» — "The minister has arrived", "The minister's arrival" և այլն:

Բայց այս տարբերակները արդեն ոչ թե թարգմանություն են բնագրից, այլ մեկ միջուկային կառույցից բխած տարբեր փոխակերպներ են, և հնարավոր է, որ տարբեր թարգմանիչներ դիմեն դրանցից որևէ մեկին կամ մյուսին: Փաստորեն, այս տեսանկյունից դիտարկելով՝ կարող ենք նշել, որ թարգմանիչը, կարողավ կամ ուսումնասիրելով բնագիրը, ընկալում է միտքը, ստանում տեղեկությունը և հետո այն կաղապարում թարգմանող լեզվում: Ռոզենցվեյգը նշում է, որ «միջուկ» հասկացության իմաստը տարբերվում է թարգմանության տեսության և «փոխակերպական քերականության» մեջ: Առաջինի դեպքում «միջուկ» տերմինով նշանակվում է միանգամայն տարրական գործընթաց, այսինքն՝ թարգմանությունը, որը Ռոզենցվեյգը անվանում է անմիջական

(интерниинарный): Բայց երբ չկա նախապես հաստատված համապատասխանություն, սակայն թարգմանվում է անմիջականորեն, ապա այդ թարգմանությունը կոչվում է բառացի:

Այս երկու ձևերի միջև տարբերությունը Ողենցվեյզը բացատրում է հետևյալ կերպ. առաջինը ենթադրում է, որ թարգմանության երկու միավորների միջև համապատասխանությունը նախօրոք տրված է, մինչդեռ բառացի դեպքում համապատասխանություն գոյություն չունի, այլ այն ստեղծվում է համապատասխանից: Հենց այստեղ է, որ ստեղծվում է փոխակերպման անհրաժեշտությունը: Միջուկային չհանդիսացող միավորը պարտադիր չէ, որ նույնությամբ թարգմանվի, այլ այն կարող է փոխարինվել այդ նույն լեզվի մեկ այլ միավորով, որն էլ համարվում է «միջուկային»: Իսկ լեզվի «միջուկը» Ողենցվեյզը համարում է մեկ լեզվից մյուսը անմիջական թարգմանության արդյունքում ստացված բազմաթիվ տարրերը: Կարող ենք ենթադրել, որ լեզվի «միջուկից» դուրս միավորների թարգմանությունը իրականացվում է յուրաքանչյուր լեզվի ներսում այդ միավորների տրամաբանական (հաջորդական) փոխակերպումների միջոցով: Այդ փոխակերպումները վերաբերում են ինչպես բառային, այնպես էլ քերականական կառույցներին:

Քերականական մակարդակում փոխակերպումները կարող են նկարագրվել փոխակերպական քերականության տերմիններով, ընդ որում այդ փոխակերպումների «անփոփոխական» ցուցանիշ համարվում է արմատային ձևության պահպանումը:

Բառային փոխակերպման դեպքում իմաստի անփոփոխականության ցուցանիշը համարվում է բառի տարրական նշանակության պահպանումը այն բանում, որին այն փոխակերպվել է (В. Ю. Розенцвейг, 1964):

Թարգմանական գործընթացի որպես իմաստային առումով անփոփոխական փոխակերպումների նկարագրությունը արդարացված է և կիրառելի է գեղարվեստական գրականության մեջ (В. Ю. Розенцвейг, 1964, 93):

Հետաքրքիր է Ողենցվեյզի մոտեցումը նաև այն առումով, որ նա փոխակերպական թարգմանությունը երբեմն նաև անվանում է պարզեցված թարգմանություն: Իսկ ավելի ուշագրավ է նրա ժանրային փոխակերպումը գեղարվեստական գրականության թարգմանության մեջ, երբ, օրինակ, բանաստեղծությունը բնագրից թարգմանող լեզու թարգմանվում է արձակով: Սա, փաստորեն, նույնպես կարելի է համարել փոխակերպական կաղապարի մակարդակներից մեկը:

Ինչ վերաբերում է գրական խոսքի տարրական միավորների բաժանմանը և փոխակերպման նկարագրմանը գեղարվեստական գրականության մակարդակում, ապա Ողենցվեյզը կարծում է, որ այստեղ խնդիրն ավելի բարդ է, քան լեզվական փոխակերպումների դեպքում: Ենթադրվում է, որ ճանապարհներից մեկը, որ կարող է տանել դեպի այս ուսումնասիրությունը, գեղարվեստական թարգմանությունների համեմատական հետազոտությունն է:

Վերոհիշյալից կարելի է հանգել այն մտքին, որ փոխակերպումը վերաբերում է և քերականական, և բառային միավորներին. քերականական մակարդակում փոխակերպումները կարող են նկարագրվել «Փոխակերպական քերականության» տերմիններով: Դա նշանակում է, որ արմատային ձևույթը այս

փոխակերպումների անփոփոխակն է: Բառային փոխակերպումները կարող են նկարագրվել իմաստաբանության տերմիններով, որպես հոմանիշային կառուցվածքային նկարագրություն: Այլ կերպ ասած նախնական բառի տարրական իմաստը պահպանելը փոխակերպված բառում կլինի այդ փոխակերպումների անփոփոխակը: Այսպիսով շարահյուսությունը կապվում է իմաստաբանությանը: Նման հարաբերությունները սկիզբ են առնում եվրոպական կառուցվածքային լեզվաբանության ավանդույթներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Snell-Horby Mary Translation Studies An Integrated Approach Shanghai Foreign Language Education Press 1995
2. Beaugrande, Robert Text and Process in Translation 1988 R. Arntz.
3. Gentzler Edwin Contemporary Translation Studies Revised 2nd Edition 2001
4. Трансформационный метод в структурной лингвистике. Наука, М. 1964
5. Виноградов В. С. Лексические вопросы перевода художественной прозы. М.: Изд-во МГУ, 1978

Օ. Օզանեսյան

ТРАНСФОРМАЦИОННАЯ ГРАММАТИКА КАК БАЗА ДЛЯ ФОРМУЛИРОВАНИЯ ТРАНСФОРМАЦИОННОЙ МОДЕЛИ В СИСТЕМЕ ПЕРЕВОДОВЕДЕНИЯ

В статье рассматривается отношение разных лингвистов к вопросу о том, что в основе трансформационной модели в рамках переводоведения лежит трансформационная грамматика. Цитировались такие лингвисты, как В. Ю. Розенцвейг, В. С. Виноградов, М. Снелл-Хорнби и Р. Борган.

Օ. Hovhannisyán

TRANSFORMATIONAL GRAMMAR AS A BASIS OF THE TRANSFORMATIONAL MODEL IN TRANSLATION STUDIES

The article discusses various approaches of linguists who suggest that Transformational Grammar of Khomskian School lies on the basis of the Transformational Model in Translation studies. In the article we cited such linguists as Vinogradov V. S., Rosenzweig V. U., Beaugrande, Robert de and Snell-Horby, M.